

ԱՆԳԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

ԱՆԳԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

1

Դարեն թագաւորին երկրորդ տարուան վեցերորդ ամիսը, ամսուան առաջին օրը,  
“Տէրոց խօսքը Անգէ մարգարէին բմիջոցով՝ ուղղուեցաւ Յուդայի կուսակալին՝  
Սահաթիէլեան Զօրաբարէլի, ու քահանայապետին՝ Յովսեղեկեան Յեսուի, ըսելով. 2  
«Զօրքերու Տէրը կը խօսի ու սա՛ կը յայտարարէ. “Այս ժողովուրդը կ'ըսէ. “Դեռ ատենը  
հասած չէ – Տէրոց տունը կառուցանելու ատենը”»: 3 Ուստի Անգէ մարգարէին բմիջոցով  
Տէրոց խօսքը ուղղուեցաւ՝ ըսելով.

4 «Արդեօք ատե՞նն է՝ որ դուք բնակիք ձեր ձեղնածածկ տուներուն մէջ,  
իսկ այս տունը աւերակ մնայ»:

5 Սակայն հիմա զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«ԱՄտածեցէ՛ք ձեր ընթացքին մասին.»

6 Շատ սերմանեցիք, բայց քիչ բհշ հնձեցիք.  
Կերաք, բայց չկշտացաք.

Հագուեցաք, սակայն ո՛չ մէկը տաքցաւ.

Ու վարձկանը ծակած քսակի համար կը վաստկի **իր** վարձքը»:

7 Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«ԱՄտածեցէ՛ք ձեր ընթացքին մասին.»

8 Լե՛ռը ելէք, փա՛յտ բերէք  
Ու կառուցանեցէ՛ք տունը, եւ ատոր պիտի հաճիմ  
Ու պիտի փառաւորուիմ, – կը յայտարարէ Տէրը: –  
9 “Շատը կ'ակնկալէիք”, բայց ահա՛ քիչը ստացաք.  
Երբ տուն բերիք, վրան փշեցի:  
Ինչո՞ւ, – կը պատգամէ զօրքերու Տէրը: –  
Իմ տանս պատճառով՝ որ աւերակ է,  
Մինչ ձեզմէ իւրաքանչիւրը իր տունը կը իփութայ:

<sup>ա</sup> Եբր.՝ Եհովայի

<sup>բ</sup> Եբր.՝ ձեռքով

<sup>գ</sup> Եբր.՝ եղաւ

<sup>դ</sup> Եբր.՝ ձեռքով

<sup>ե</sup> Եբր.՝ եղաւ

<sup>գ</sup> Եբր.՝ Զեր սիրտին մէջ դրէ՛ք

<sup>է</sup> Եբր.՝ ճամբաներուն

<sup>լ</sup> Եբր.՝ բերիք

<sup>բ</sup> Եբր.՝ չգինովցաք

<sup>ժ</sup> Եբր.՝ Շատին կը նայէիք

## ԱՆԳԵՒ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- 10 Հետեւաբար ձեր վերեւը եղող երկինքը դադրեցուցած է իր ցողը,  
երկիրն ալ դադրեցուցած է իր արգասիքը:  
11 Ես չորութիւն բերի երկրին վրայ եւ լեռներուն վրայ,  
Յորենին, քաղցուին ու իւղին վրայ,  
Գետինի արտադրութեան վրայ,  
Մարդոց վրայ եւ անասուններուն վրայ,  
Զեռքերու ամբողջ վաստակին վրայ»:

### ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՀՆԱՁԱՆԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ

12 Այն ատեն Սաղաթիէլեան Զօրաբարէլ, քահանայապետը՝ Յովսեղեկեան Յեսու, եւ ժողովուրդին ամբողջ մնացորդը մտիկ ըրին Տէրոց՝ իրենց Աստուծոյն ծայնը եւ Անգէ մարգարէին խօսքերը, Տէրոց՝ իրենց Աստուծոյն անոր յաճճած առաքելութեան համաձայն, ու ժողովուրդը՝ Տէրոցմէն վախցաւ: 13 Տէրոց պատգամաւորը՝ Անգէ Տէրոց պատգամները ժողովուրդին հաղորդեց՝ ըսելով. «Ես ձեզի հետ եմ», – կը պատգամէ Տէրը: – 14 Տէրը Յուդայի կուսակալին՝ Սաղաթիէլեան Զօրաբարէլի հոգին արթնցուց, նաեւ քահանայապետին՝ Յովսեղեկեան Յեսուի հոգին, ու ժողովուրդին ամբողջ մնացորդին հոգին. ուստի գացին եւ իրենց Աստուծոյն՝ զօրքերու Տէրոց տան մէջ գործի լծուեցան, 15 Դարեհ թագաւորին երկրորդ տարուան վեցերորդ ամսուան քսանչորրորդ օրը:

### ՆՈՐ ՏԱՅԱՐԻՆ ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆԸ

## 2

Եօթներորդ ամսուան քսանմէկերորդ օրը, «Տէրը խօսեցաւ» Անգէ մարգարէին միջոցով՝ ըսելով. 2 «Այժմ խօսէ՝ Յուդայի կուսակալին՝ Սաղաթիէլեան Զօրաբարէլի, քահանայապետին՝ Յովսեղեկեան Յեսուի, ու ժողովուրդին մնացորդին, ըսելով.

- 3 “Զեր մէջ ողջ մնացած ո՞վ կայ,  
Որ այս տունը իր նախկին փառքով տեսեր է.  
Հիմա զայն ի՞նչպէս կը տեսնէք.  
Միթէ ոչինչի պէս չէ՞ ձեր աշքերուն՝ անոր բաղդատելով□»:  
4 «Բայց հիմա՝ զօրացի՛ր, ո՞վ Զօրաբարէլ, – կը պատգամէ Տէրը, –  
Զօրացի՛ր, ո՞վ քահանայապետ՝ Յովսեղեկեան Յեսու,  
Նաեւ դո՛ք, ո՞վ երկրին ամբողջ ժողովուրդը.  
Զօրացէ՛ք, – կը պատգամէ Տէրը, – եւ աշխատեցէ՛ք.  
Որովհետեւ ես ձեզի հետ եմ, – կը պատգամէ զօրքերու Տէրը: –  
5 Զեզի հետ կնքած ուխտիս խոստումին համաձայն՝ երբ Եգիպտոսէն ելաք,  
Իմ Հոգիս ձեր մէջ կը կենայ. մի՛ վախնաք»:  
6 Արդարեւ զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.

<sup>ի</sup> Երր.՝ վազէ

<sup>լ</sup> Երր.՝ Տէրոց երեսէն

<sup>մ</sup> Երր.՝ Տէրոց խօսքը եղաւ

<sup>բ</sup> Երր.՝ ձեռքով

## ԱՆԳԵՒ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- «Քիչ **մը ատենէն** ետք՝ անգա՞մ մըն ալ պիտի սարսեմ երկինքն ու երկիրը,  
Ծովը եւ ցամաքը:
- 7 Նաեւ բոլոր ազգերը պիտի սարսեմ.  
Բոլոր ազգերուն ցանկալի **բաները** պիտի գան,  
Եւ այս տունը փառքով պիտի լեցնեմ,—  
Կը պատգամէ զօրքերու **Տէրը**:—
- 8 Արծաթը ի՞մս է, ուսկի՞ն ալ իմս է,— կը պատգամէ զօրքերու **Տէրը**.—
- 9 Այս տան վերջին փառքը առաջինէն մեծ պիտի ըլլայ,— կը պատգամէ զօրքերու **Տէրը**,—  
Եւ այս տեղին խաղաղութիւն պիտի տամ»), կը յայտարարէ զօրքերու **Տէրը**:

## ՄԱՐԳԱՐԵՆ ԿԸ ԽՈՐՀՐԴԱԿՅԻ ՁԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ

10 Դարենի երկրորդ տարին, իններորդ **ամսուան** քսանչորրորդ **օրը**, «Տէրը խօսեցաւ» Անգէ մարգարէին միջոցով՝ ըսելով. 11 «Այժմ զօրքերու **Տէրը** սա՛ կը յայտարարէ. «Հիմա օրէնքին մասին հարցո՛ւր քահանաներուն. 12 «Եթէ մարդ մը իր հագուստին քղանցքին մէջ սրբացուած միս կրէ, ու քղանցքով հացի, ապուրի, գինիի, իւղի, կամ որեւէ ուտելիքի դպչի, ատոնք սրբացուած կ'ըլլա՞ն»: Քահանաները պատասխանեցին. «Ո՛չ»: 13 Անգէ ըսաւ. «Եթէ եմեռելէ գաղուած մը ատոնցմէ մէկուն դպչի, կը պղծուի՞»: Քահանաները պատասխանեցին. «Կը պղծուի»: 14 Ուստի Անգէ ըսաւ.

«Այդպէս է այս ժողովուրդը,  
Այդպէս է այս ազգը իմ առջեւս,— կը պատգամէ զօրքերու **Տէրը**,—  
Այդպէս է իրենց ձեռքերուն ամբողջ գործը.  
Ինչ որ հոն կը մատուցանեն՝ պիղծ է»:

## ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

- 15 «Ուրեմն այժմ էուշադրութի՛ւն դարձուցէք՝ «այս օրէն բետք պատահելիքին,  
Երբ դեռ Տէրոց տաճարին մէջ քար քարի վրայ դրուած չէ»:  
16 **Այդ ատեն**՝ երբ մէկը քսան **քոռ ցորենի** դէզին քով երթար,  
Տասը **քոռ** կը գտնուէր».  
Երբ հնձանին քով երթար՝ **գինիի** կարասէն յիսուն մար հանելու,

<sup>գ</sup> **Երբ.**՝ շարժեմ

<sup>դ</sup> **Երբ.**՝ Տէրոց խօսքը եղաւ

<sup>ե</sup> **Երբ.**՝ մեռած անձէ

<sup>գ</sup> **Երբ.**՝ անմաքուր եղած

<sup>է</sup> **Երբ.**՝ ձեր սիրտին մէջ դրէ՛ք

<sup>լ</sup> **Երբ.**՝ վեր

<sup>բ</sup> **Երբ.**՝ Անոնց ըլլալէն առաջ

<sup>ժ</sup> **Երբ.**՝ կար

## ԱՆԳԵՒ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

Քսան մար կը գտնուէր:

- 17 Զեզ խորշակահարութեամբ, **արմտիքի** դալուկով ու կարկուտով զարկի  
Զեր ձեռքերուն ամբողջ գործին մէջ,  
Սակայն ձեզմէ ո՞չ մէկը ինծի վերադարձաւ, – կը պատգամէ Տէրը: –  
18 Ուրեմն ուշադրութիւն դարձուցէք այս օրէն ետք, –  
Տէրոց տաճարին հիմնադրութեան օրէն ետք, –  
Իններորդ ամսուան քսանչորրորդ օրէն ետք ուշադրութիւն դարձուցէք.  
19 Հունտը տակաւին ամբարին մէջ է.  
Որթատունկը, թզենին, նոնենին ու ձիթենին  
Դեռ պտուղ բերած չեն.  
Սակայն այս օրէն սկսեալ **Ճեզ** պիտի օրհնեմ»:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄԸ ԶՈՐԱԲԱԲԵԼԻ

- 20 Տէրոց խօսքը երկրորդ անգամ  
Անգէի <sup>հ</sup>ուղղուեցաւ ամսուան քսանչորրորդ **օրը**<sup>՝</sup> ըսելով.  
21 Խօսէ՛ Ձուդայի կուսակալին՝ Զօրաբաբէլի, ըսելով.  
«Ես երկինքն ու երկիրը պիտի սարսեմ,  
22 Թագաւորութիւններուն գահը պիտի տապալեմ,  
Ազգերու թագաւորութիւններուն զօրութիւնը պիտի փճացնեմ,  
Կառքերն ու անոնց հեծեալները պիտի տապալեմ.  
Զիերն ու անոնց հեծեալները պիտի իյնան՝  
Իւրաքանչիւրը իր եղբօր սուրով:  
23 Այդ օրը, – կը պատգամէ զօրքերու Տէրը, –  
Զեզ պիտի առնեմ, ո՞վ Սաղաթիէլեան Զօրաբաբէլ, իմ ծառաս, – կը պատգամէ Տէրը, –  
Ու քեզ կնիքի պէս պիտի դնեմ,  
Որովհետեւ քեզ ընտրած եմ», կը պատգամէ զօրքերու Տէրը:

---

<sup>հ</sup> **Երը.**՝ եղաւ

<sup>լ</sup> **Կամ** Հեթանոսներու